

Որպես եզրակացություն կարելի է հաստատել, որ ստախոսությունը կամ խոստմնադրուժ ըլլալը մեր կողմէ, ուրիշներու հանդէպ, բոլորովին անբարոյական արարքներ են եւ առանց հակասութեան երբեք կարելի չէ ընդհանրականացնել զանոնք: Անոնք նաեւ կամեցողութեան համառակ են:

3. Տաղանդի օրինակը

Երրորդ անձ մը, թէեւ բնութեամբ տաղանդաւոր է, սակայն կը նախընտրէ այդ տաղանդը չգարգացնել ու առանց տքնաջան աշխատանքի միայն հաճոյքներու հետեւիլ:

Կանտ, իր երրորդ օրինակին մէջ, անձնական կանոնի (մաքսիմ) առանց հակասութեան ընդհանրականացում մը, թէեւ մտածելի, սակայն կամքի ու կամեցողութեան հակառակ կը նկատէ: Այլ խօսքով, թերեւս կարելի է պատկերացնել, որ շատեր իրենց ունեցած տաղանդի հանդէպ անփոյթ ու անուշադիր վերաբերմունք ունենան ու նախընտրեն դատարկապորտի զուարճալի ու հանգստաւետ կեանք մը ապրիլ. ասիկա սակայն կարելի չէ, որպէս անձնական կանոն (մաքսիմ) ընդհանրացնել, որովհետեւ՝ կամքի ու կամեցողութեան հակառակ է. ասիկա նոյնիսկ լքումն է կամքին: Ով որ դատարկապորտի ուղիին հետեւի ան ընդհանրապէս հետաքրքրուած չէ իր անձնական զանազան կարելիութիւնները իրականացնելով. այսինքն՝ կամք մը, որ կամագրկութեան դատապարտուած է:

Այլ տեսանկիւնէ դիտուած, տաղանդի կատարելագործումը ինքնին մարդկային բնութեան նպատակին կը ծառայէ: Տաղանդի հանդէպ, որեւէ անտեսում կամ անփոյթ ու անուշադիր վերաբերմունք եթէ մարդու ինքնանպատակ գոյութիւնը չի խանգարեր, սակայն մեծապէս կը վնասէ անոր զարգացման ու յառաջդիմութեան: Մարդկութիւնը որքա՞ն պիտի վնասէր, եթէ գոյութիւն չունենային պատմութեան մէջ գոյութիւն ունեցող կամ ժամանակակից նշանաւոր ու տաղանդաւոր այն գիտնականները, արուեստագետներն ու մտաւորականները, որոնց տաղանդը կամ տաղանդի պտուղները, այսօր, կը ճոխացնեն մեր կեանքը:

Որպէս եզրակացություն կարելի է հաստատել, որ մարդկային բարի կամքը (ինչպէս տեսանք) կը յառաջանայ բանականութենէն. եւ միայն բանականութեամբ գործող իմ կամքով է, որ պիտի ջանամ զարգացնել իմ տաղանդը: Իսկ եթէ կամայականօրէն անտեսեմ իմ տաղանդը, այն ատեն ես դադրած կ'ըլլամ բանականութեան տէր Էակ մը ըլլալէ:

4. Օգնութեան օրինակը

Չորրորդ անձ մը, կը հանդիպի դժուարութեան մէջ գտնուող այլ անձի մը, որուն ինք կրնայ օգնել, սակայն կը զլանայ անոր իր օգնութիւնը:

Կանտ, իր չորրորդ եւ վերջին օրինակին մէջ, երբեք նկատի չունի փոխադարձ օգնութեան (իրերօգնութեան) սկզբունքը: Այլ խօսքով, երբ ես որպէս